# ՄԱՅՐ ԱԹՈՌ

## Գէորգեան ճեմարանի 1914–15 թ. շրջանաւարտները.

Գ. ճեմարանի դասարանական և լսարանական հրապարակական քննութիւնները սկսուել են այս տարի սովորականից աւելի վաղ—մարտի 31–ից և վերջացել են ապրիլի 25–ին։ ճեմարանի լսարանական բաժին աւարտող ուսանողներն ճեմարանի հիմնադիր երջանկայիշատակ Տ. Տ. Գէորգ Դ–րդ Կաթուղիկոսի շիրմի վրայ՝ ս. պատարագից յետոյ հանդիսաւոր հոգեհանգստեան կարգ կատարել տուին։

Երրորդ լսարանն աւարտել են և մրցագիր ստացել հետևեալ տասն ուսանողները. 1) Աբեան Գրիգոր Շուշեցի, 2) Խոջայեան Մկրտիչ Վաղարշապատցի, 3) Ղազարեան Կարապետ Ալէքսանդրապօլցի, 4) Մկրտումեան Մկրտիչ Վլադիկավկազցի, 5) Ներսիսեան Գրիգոր Փարպեցի, 6) Ոսկերչեան Սարգիս Բաբերդցի, 7) Ռշտունի Վահան Վաղարշապատցի, 8) Սարգսեան Ալէքսանդր Դաշրուռունցի, 9) Վարդանեան Ռուբէն Երևանցի, 10) Տէր-Յովհաննիսեան Մամիկոն Երևանցի։

Երկու ուսանող՝ Էօլչիւճեան և Ոսկանեան, որոնք ամբողջ դասընթացը լսել են և սահմանուած քննութիւնները տուել, բայց դեռ աւարտական շարադրութիւն ներկայացրած չլինելով չեն ստացել մրցագիր։

Իսկ դպրոցական բաժինն աւարտել են հետևեալ 20 աշակերտները։ 1) Ալթունեան Մամիկոն Ախալքալակցի, 2) Ատուաձատրեան Նշան Մակուեցի, 3) Բայբուրդցեան Մկրտիչ Ղփչաղցի, 4) Բունիաթեան Արամ Քեօրփալուեցի, 5) Գաբրիէլեան Լևոն Աչաչրցի, 6) Գիւլնազարեան Մովսէս Օշականցի, 7) Գիւլնազարեան Յովհաննէս Փէշտաղցի, 8)

Դրմբեան Սուրէն Հին-Բայազէտցի, 9) Կարապետեան Կարապետ Սէյդավարցի, 10) Ղազարեան Հրաչեայ Ախալցխացի, 11) Ղուկասեան Հայկ Նիժեցի, 12) Ճապաշեան Մովսէս Զալթրցի, 13) Մուրադեան Նշան Մշեցի, 14) Մկրտումեան Ենովք Բեգիւանցի, 15) Սաղաթելեան Կարապետ Ալիքուշաքցի, 16) Սուքիասեան Սարգիս Ախալքալաքցի, 17) Տէր Երեմեան Գուրգէն Ալեքսանդրապոլցի, 18) Տէր Ղևոնդեան Յակոբ Կարնեցի, 19) Տէր Վարդանեան Միսակ Ծիթոզցի, 20) Փարթամեան Աշոտ Ռուշչուկցի։ Սրանցից հինգը հեռացան, մնացած 15 ընթացաւարտներից, որոնք խնդիր էին տուել լսարան ընդունուելու համար, Լսարանական բաժնի Մանկավարժական ժողովն ընտրեց 13-ին միայն։

---

Վեհափառ Հայրապետի Կոնդակով Ճեմարանի Տեսուչ է կարգուած ս. Հռիփսիմէի վանքի վանահայր Տ. Գարեգին վարդապետ Յովսէփեանը, իսկ Տեսչի օգնական է նշանակուած Ալէքսանդրապոլի Արղութեան դպրոցի Տեսուչ Աւետիք Տէր Պօղոսեանը։ Տէր Գարեգին վարդապետը արդէն կազմել է ուսուչական խումբը, անցեալ տարուայ խմբի մէջ որոշ փոփոխութիւններ անելով։

---

Յունիսի 11-ին ս. Թարգմանչաց տօնի օրը ս. պատարագը մատուցուեց Օշականում ս. Մեսրոպի եկեղեցում՝ ներկայութեամբ Մ. Աթոռի միաբանից, Ճեմարանի աշակերտների և խուռն ժողովրդեան։ Պատարագիչն էր Տ. Արսէն վարդապետ Ղլտչեանը։ Ս. Պատարագից յետոյ հոգեհանգստեան կարգ կատարուեց Ս. Մեսրոպի դամբարանի վրայ։

---

Յունիսի 14-ին Մայր Տաճարում ս. պատարագից յետոյ Վեհափառ Կաթուղիկոսի հրամանով ներկայութեամբ

միաբանների և ժողովրդոց խուռն բազմութեան հոգեհանգստեան կարգ կատարուեց Նորին Կայսերական Բարձրութիւն Մեծ իշխան Կոնստանդին Կոնստանդինովիչի մահուան առթիւ։ Մեծ իշխանը ծնուել է 1858 թ. օգոստոսի 10-ին և վախճանուեց յունիսի 2-ին ներկայ 1915 թ.։

---

Յունիսի 28-ին մեծ հանդիսով կատարուեց Վեհափառ Կաթուղիկոսի օծման տարեդարձը։ Նախընթաց երեկոյեան ամբողջ միաբանութիւնը շուրջառ առած մեծ շքով ուղեկցեց Վեհափառին վեհարանից Մայր Տաճար։ Վանքի բակը լի էր երկսեռ ժողովրդով։ Հանդիսաւոր ս. Պատարագ մատուցեց Վանական Կառավարութեան Նախագահ Տ. Անանիա Արքեպիսկոպոսը։ Ս. Պատարագից յետոյ ս. Իշման սեղանի առաջ հանդիսաւոր Հայրապետական գոհաբանական մաղթանք կատարուեց, ներկայութեամբ ամբողջ միաբանութեան և բազմաթիւ աղօթողների։ Մաղթանքից յետոյ միաբանութիւնը և ժողովրդականք համբուրեցին Հոգևոր Տիրոջ ս. աջը։ Վեհարանում Վեհափառը բարեհաճեց ընդունել Երևանի թեմակ. դպրոցի հոգաբարձութեանը՝ գլխաւորութեամբ Տ. Խորէն եպիսկոպոսի, որոնք եկել էին Վեհափառ Հայրապետի օրհնութիւնը ստանալու Օծման Դ-րդ տարեդարձի առթիւ։ Երեկոյեան վանքի բակում հրաւառութիւն կար։ Վեհափառը զանազան տեղերից ստացել է բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ։

---

Յունիսի 27-ին Վեհափառ Կաթուղիկոսի հրամանով Դիւանապետ Տ. Բագրատ եպիսկոպոսը վարդապետական մանաւոր կոչումն տուեց Տ. Թադէոս և Տ. Երուանդ աբեղաներին ս. Գայիանէի վանքում։